ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/22, 16.02.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 18.02.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Թրենդ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/01» և «ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/02»

Գնման առարկան՝ փողոցների և ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/01» և «ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/02» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Կապանի Նորոգշին» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու որոշումը,
2. դադարեցնել «Թրենդ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու որոշումը,
3. դադարեցնել «ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/01» և «ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/02» ծածկագրերով գնման ընթացակարգերի պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ «Թրենդ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության պ. 2 49
հեռ: (+374) 55 348 734
Էլ.փոստ՝ trend.trend90@mail.ru

Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան
Հասցե՝ՀՀ, Սյունիքի մարզի, ք.Քաջարան, Լեռնագործների 4
Հեռախոս՝ +37493789769
Էլ. Փոստ՝ abelyan2000@mail.ru

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար փողոցների և ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/02 ծածկագրերով բաց մրցույթներ

Բողոք

- **Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.**

Քաջարանի համայնքապետարանի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ հայտարարվել է ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱՇՁԲ-22/02 ծածկագրերով բաց մրցույթներ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Թրենդ» ՍՊԸ-ն:

www.gnumner.am կայքում 15.02.2022թ. հրապարակված տեղեկատվությունների համաձայն տեղեկանում ենք, որ Ընթացակարգերով ընտրված մասնակից է ճանաչվել «Կապանի նորոգշին» ՍՊԸ-ն, որի հետ կկնքվի պայմանագիր՝ անգործության համար ժամկետ չի սահմանվել (հրավերով անգործության համար սահմանված է 10 օրացուցային օր):

Միևնույն ժամանակ վերը նշված հայտարարության համաձայն «Թրենդ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար՝ հրավերի պահանջներին անհամապատասխան:

- ***Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով **մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:**

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի ***գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:***

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը**՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով *նախատեսված* **հայտարարությունը հրապարակվելու *օրվանից*** մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/02 ծածկագրերով բաց մրցույթներ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Թրենդ» ՍՊԸ-ն:

www.gnumner.am կայքում 15.02.2022թ. հրապարակված տեղեկատվության համաձայն տեղեկանում ենք, որ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Կապանի նորոգշին» ՍՊԸ-ն, որի հետ կկնքվի պայմանագիր՝ անգործության ժամկետ չի սահմանվել (անգործության համար սահմանված 10 օրացուցային օրի փոխարեն), իսկ նույն Ընթացակարգի շրջանակներում «Թրենդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/02 ծածկագրերով ընթցակարգի գնահատող հանձնաժողովը «Կապանի նորոգշին» ՍՊԸ-ին ճանաչելով Ընթացակարգի ընտրված մասնակից՝ միևնույն ժամանակ հրապարակելով պայմանագիր կնքելու մասին որոշում, իսկ այնուհետև «Թրենդ» ՍՊԸ-ին ճանաչելով հրավերին չհամապատասխանող մասնկից՝ վերջինիս հայտը անբավարար գնահատելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ «Թրենդ» ՍՊԸ-ի հայտի շտկման համար սահմանել է ժամկետ շտկումներ կատարելու համար, բայց միչև ժամկետի ավարտը, հայտը մերժել է :

Գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է վերը նշված փաստական հանգամանքը և որոշում է կայացվել «Կապանի նորոգշին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար, մինչդեռ հնարավորություն չի տրվել «Թրենդ» ՍՊԸ-ն անհամապատասխանությունը շտկելու :

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Պարտավորեցնել ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/02 ծածկագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Կապանի նորոգշին» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/02 ծածկագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «Թրենդ» ՍՊԸ -ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը:
3. Պարտավորեցնել ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/01 և ՔՀ-ԲՄԱԾՁԲ-22/02 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Հարգանքով՝

«Թրենդ» ՍՊԸ-ի տնօրեն
/Ա. Բաղալյան

15.02.2022